



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 10 » մարտի 2015թ.

№ 30

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով, համաձայն ԼՂՀ դատախազության Կանոնակարգի 9-րդ, 19-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ կետերի և «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնում / այսուհետ բաժին/, ըստ զբաղեցրած պաշտոնների, կատարել աշխատանքի հետևյալ բաժանումը.

1) Բաժնի պետ Կ.Մ.Սաֆարյանին՝

1.1 Կազմակերպել և իրականացնել աշխատանքների ընդհանուր ղեկավարում:

1.2 Վերահսկել բաժնի աշխատակիցների վրա դրված պարտականությունների կատարումը:

1.3 Ապահովել ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների և կարգադրությունների կատարումը:

1.4 Իրավասության սահմաններում դատախազության մարմիններից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություններ և նյութեր:

1.5 Իրավասության սահմաններում նախապատրաստել և ԼՂՀ գլխավոր դատախազին ներկայացնել առաջարկություններ, կազմել տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ:

1.6 Առաջարկություններ ներկայացնել ԼՂՀ գլխավոր դատախազին՝ բաժնի աշխատակիցներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

1.7 Ապահովել բաժնի խնդիրներից և գործառույթներից բխող՝ ԼՂՀ գլխավոր դատախազի հանձնարարությունների կատարումը:

Բաժնի պետը բաժնի գործունեության համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ գլխավոր դատախազի առջև:

2) Բաժնի ավագ դատախազ Կ.Բ.Սիմոնյանին՝

2.1 Իրականացնել կազմակերպա-վերահսկողական գծով և անձնակազմի հարցերով աշխատանքները:

3) Բաժնի դատախազ Ի.Ա.Մուսայելյանին՝

3.1 Իրականացնել վիճակագրության, վերլուծության, միջազգային կապերի գծով և իրավական ապահովման աշխատանքները:

2. Բաժնի ավագ դատախազին ու դատախազին՝ կատարել նաև բաժնի խնդիրներից և գործառույթներից բխող բաժնի պետի այլ հանձնարարությունները:

3. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 32 առ 01.06.2011 թ. «Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին» հրամանը:

4. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղաքապետախազներին:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մուսիյան